11
ՓԵՏՐՎԱՐԻ
2022

Luys Lnyu®

«ՁՄԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՂԵՐ - 2022». ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՌԴ ԵՎ ՉԺՀ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՁՄԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՂԵՐ - 2022». Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՌԴ ԵՎ ՉԺՀ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ՌՈՒՍ-ՉԻՆԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 5

3. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ՝ ՌԴ ԵՎ ՉԺՀ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ 7

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 8

ՆԱԽԱԲԱՆ

Շատ փորձագետներ միջազգային հարաբերություններում ներկայումս ստեղծված իրավիճակը համեմատում են «Սառը պատերազմի» ամենալարված ժամանակահատվածների՝ Բեռլինյան, նույնիսկ Կարիբյան ճգնաժամերի հետ: ՌԴ-ԱՄՆ առճակատումը, Արևմուտքի կողմից այսպես կոչված «ժողովրդավարությունների դաշինք» ստեղծելու ձգտումը, Ուկրաինայի շուրջ լարվածության կտրուկ աճը, Ռուսաստանի կողմից ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին ուղղված անվտանգության երաշխիքների վերաբերյալ «առաջարկ-վերջնագիրը» և Արևմուտքի անզիջում պատասխանը աննախադեպ շիկացրել են միջազգային մթնոլորտը:

Սակայն, ի տարբերություն սառըպատերազմյան ճգնաժամերի, այժմ առկա է մի շատ կարևոր առանձնահատկություն՝ հզոր Չինաստանի գործոնը, որն ի վիճակի է խառնել ինչպես Մոսկվայի, այնպես էլ Վաշինգտոնի խաղաքարտերը, ինչպես նաև կտրուկ մեծացնել կողմերից մեկի առավելությունը մյուսի նկատմամբ: ԱՄՆ և ՌԴ միջև այսպես կոչված նոր “game of chicken”-ը[1], ի տարբերություն Կարիբյան ճգնաժամի, այժմ ունի կարևոր «արբիտր»՝ ի դեմս Պեկինի, որը կարող է կտրուկ փոխել խաղի ընթացքը: Միջազգային հարաբերություններում ստեղծված բարդ և բազմաշերտ լարվածությունն ավելի ցցուն է դառնում Արևմուտքի կողմից Պեկինի ձմեռային օլիմպիական խաղերի դիվանագիտական բոյկոտի համատեքստում:

Պեկինի օլիմպիադայի բացման ամենակարևոր դրվագը, անշուշտ, ո՛չ Չինաստանին հատուկ աննախադեպ և մասշտաբային շոուն էր, ո՛չ էլ նույնիսկ Արևմուտքի դիվանագիտական բոյկոտը, այլ դրանից անմիջապես առաջ Չինաստանի և Ռուսաստանի առաջնորդների տարածած համատեղ հայտարարությունը «Նոր դարաշրջան թևակոխող միջազգային հարաբերությունների և կայուն գլոբալ զարգացման» մասին[2]: Հայտարարությունը հստակ քաղաքական և աշխարհաքաղաքական ուղերձներ է պարունակում և կարող է դառնալ նոր գլոբալ

[1] Այս խաղը օգտագործվում է կոնֆլիկտների մոդելավորման համար, երբ խաղացողները գտնվում են բախման ընթացքի մեջ: Խաղացողները կարող են լինել վարորդներ, ովքեր մոտենում են միմյանց նեղ ճանապարհով, սակայն յուրաքանչյուրն ունի ընտրության հնարավորություն՝ շեղվել և խուսափել բախումից կամ շարունակել ընթացքը՝ մինչև բախում: Հաճախ այս մոդելը կիրառվում է Կարիբյան ճգնաժամի ընթացքում ԽՍՀՄ և ԱՄՆ-ի վարքագիծը բնութագրելիս:

[2] Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики о международных отношениях, вступающих в новую эпоху, и глобальном устойчивом развитии 4 февраля 2022 года, http://kremlin.ru/supplement/5770 (այցելվել է 10.02.2022թ.):

անվտանգային համակարգի ձևավորման նախերգանքը: Փորձենք անդրադառնալ Պուտին-Սի Ծինփին համատեղ հայտարարության ամենակարևոր դրվագներին:

Կողմերը հայտարարությունը սկսում են՝ նախ արձանագրելով, որ ներկայումս աշխարհում տեղի են ունենում զանգվածային փոփոխություններ, մարդկությունը թևակոխում է արագ զարգացման և մասշտաբային վերափոխումների փուլ, ձևավորվում է ուժերի համաշխարհային հավասարակշռության վերաբաշխման միտում: Պեկինն ու Մոսկվան բոլոր երկրներին կոչ են անում «**պաշտպանել ՄԱԿ-ի կենտրոնական դերակատարության վրա հիմնված միջազգային համակարգը, միջազգային իրավունքի վրա հիմնված աշխարհակարգը, հասնել իրական բազմաբևեռության**՝ ՄԱԿ-ի և նրա Անվտանգության խորհրդի համակարգող և կենտրոնական դերակատարության շրջանակներում»: Ըստ էության՝ Չինաստանն ու Ռուսաստանը հանդես են գալիս Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված աշխարհակարգի և միջազգային համակարգերի տրամաբանության պահպանման օգտին՝ միաժամանակ ընդունելով տեղի ունեցող արագ փոփոխությունների փաստը և գործող մեխանիզմները կատարելագործելու անհրաժեշտությունը: Հայտարարության տեքստում հաջորդիվ անդրադարձ է կատարվում միազգային հարաբերությունների տարբեր ասպեկտներին, ուստի ուսումնասիրենք դրանցից ամենակարևորները:

1. ՌՈՒՍ-ՉԻՆԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուս-չինական հայտարարության տեքստում հատկապես մեծ ուշադրության են արժանացել ժողովրդավարության, դրա ընտրողական մեկնաբանությունների, տարբեր երկրներում ժողովրդավարության առանձնահատկությունների թեմաները: Մասնավորապես, հայտարարության մեջ նշվում է, որ կողմերը միակարծիք են այն հարցում, որ «ժողովրդավարությունը համամարդկային արժեք է, այլ ոչ թե առանձին երկրների մենաշնորհ, դրա առաջխաղացումն ու պաշտպանությունը ամբողջ միջազգային հանրության ընդհանուր խնդիրն է»: Կողմերը նաև փորձում են ներկայացնել ժողովրդավարության սահմանումը՝ իրենց պատկերացումների շրջանակներում. «Ժողովրդավարությունը քաղաքացիների մասնակցության հնարավորությունն է սեփական երկրի կառավարմանը՝ ի շահ բնակչության բարեկեցության բարձրացման և ժողովրդի իշխանության սկզբունքի ապահովման»:

Պեկինն ու Մոսկվան ընդգծում են, որ «կախված կոնկրետ երկրի հասարակական-քաղաքական կառուցվածքից, պատմությունից, ավանդույթներից և մշակութային առանձնահատկություններից՝ վերջինիս ժողովուրդը իրավունք ունի ընտրել ժողովրդավարության իրացման այնպիսի ձևեր և մեթոդներ, որոնք համապատասխանում են տվյալ երկրի առանձնահատկություններին: Պետության ժողովրդավարական լինելը դատելու իրավունքը պատկանում է միայն նրա ժողովրդին»: Նշվում է նաև, որ «Ռուսաստանն ու Չինաստանը, հանդիսանալով համաշխարհային գերտերություններ՝ հարուստ մշակութային և պատմական ժառանգությամբ, ունեն ժողովրդավարության խոր ավանդույթներ»:

ՌԴ և ՉԺՀ առաջնորդների հայտարարության տեքստում ժողովրդավարության թեմայի վերաբերյալ այսքան խոր և համապարփակ արձագանքը պատահական չէ, այն պատասխանն է ԱՄՆ-ի և հավաքական Արևմուտքի քաղաքականությանը, որը միտված է այսպես կոչված «ժողովրդավարական» աշխարհը Ռուսաստանին և Չինաստանին ու վերջիններիս դաշնակիցներին հակադրելուն ու նրանց մեկուսացմանը: Այսպես, Պեկինն ու Մոսկվան իրենց հստակ դիրքորոշումն են արտահայտում ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի կողմից նախաձեռնված և անցկացված Ժողովրդավարության առաջին գագաթնաժողովի կապակցությամբ:

Ընդ որում, ժողովրդավարական դաշինք ստեղծելու քաղաքականությունը ԱՄՆ-ում միայն Բայդենի կամ դեմոկրատների հետ կապելը սխալ մոտեցում կլինի, քանի որ այդ քաղաքականությունը երկկուսակցական աջակցություն է վայելում: Այս տեսանկյունից ուշագրավ է դեռ նախքան ԱՄՆ նախագահի վերջին ընտրություններում Բայդենի ու դեմոկրատների հաղթանակը, ԱՄՆ նախկին հանրապետական պետքարտուղար Պոմպեոյի հայտնի ելույթը Նիքսոնի անվան գրադարանում[3], որտեղ նա ուրվագծում էր ԱՄՆ-Չինաստան գաղափարական խզման հետագա ընթացքը: Հետևաբար ռուս-չինական համատեղ հայտարարությունը նույնպես երկարաժամկետ նպատակներ է հետապնդում և միտված է արևմտյան ժողովրդավարությանը միասնական ճակատով սեփական ժողովրդավարությունը հակադրելուն:

[3] Secretary Michael R. Pompeo Remarks “Communist China and the Free World’s Future”, U.S. Department Of State, Office of the Spokesperson, The Richard Nixon Presidential Library and Museum Yorba Linda, California, July 23, 2020, https://cl.usembassy.gov/secretary-michael-r-pompeo-remarks-communist-china-and-the-free-worlds-future/ (այցելվել է 10.02.2022թ.):

Չինաստանն ու Ռուսաստանը դեմ են ժողովրդավարության թեմայի շահարկմանը և այն քաղաքական նպատակներին ծառայեցնելու որոշ երկրների գործելաոճին: Մասնավորապես նշում են, որ որոշ երկրների կողմից ժողովրդավարության չափորոշիչների վերաբերյալ գնահատականներ տալու իրավունքի վերապահումը, գաղափարախոսական բաժանարար գծերի ստեղծումը, այդ թվում՝ նեղ ձևաչափով իրավիճակային դաշինքների ձևավորումը ժողովրդավարության ոտնահարման և դրա արժեքներից նահանջի օրինակներ են:

Այնուհետև, հայտարարության հեղինակները միասնական դիրքորոշում են ներկայացնում ժողովրդավարական արժեքների պաշտպանության պատրվակով տարբեր երկրների ներքաղաքական գործընթացներին միջամտելու անթույլատրելիության կապակցությամբ. «Ռուսաստանն ու Չինաստանը դեմ են արտաքին ուժերի գործողություններին՝ միտված ընդհանուր սահմանակից երկրների անվտանգության ու կայունության խաթարմանը, մտադիր են դիմակայել արտաքին դերակատարների միջամտությանը երկրների ներքին գործերին՝ ցանկացած պատրվակով, դեմ են «գունավոր հեղափոխություններին» և մեծացնելու են համագործակցությունը վերոհիշյալ ոլորտներում»: Ակնհայտ է, որ այս վերջին արձանագրումը կապված է նաև Ղազախստանում վերջերս տեղի ունեցած իրադարձությունների հետ, երբ ինչպես Պեկինն, այնպես էլ Մոսկվան հստակ ընդգծեցին այդ երկրում գունավոր հեղափոխության անթույլատրելիության մասին իրենց դիրքորոշումը: Այն նաև արձագանք է Բելառուսում, Հոնկոնգում տեղի ունեցած զանգվածային ցույցերը Արևմուտքի կողմից քաղաքական շահարկումների առարկա դարձնելու, ույղուրների խնդիրը քաղաքականացնելու փորձերին:

Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի և Չինաստանի այս մոտեցումը կարող է շատ ընկալելի լինել աշխարհի տարբեր երկրների համար, որոնք ունեն ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաբերյալ սեփական պատկերացումները, բայց և չեն ուզում այդ սկզբունքները ստորադասել պետության և ժողովրդի շահերին: Պեկինն ու Մոսկվան այդ երկրներին առաջարկում են ընտրել «այլընտրանքային ժողովրդավարության» տարբերակը, որը նույնքան ժողովրդավարական է, որքան արևմտյան տարբերակը, սակայն ավելի «ճկուն» է ու չպարտավորեցնող:

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Պուտին-Սի Ծինփին հայտարարության մյուս կարևոր հատվածը նվիրված է միջազգային անվտանգային խնդիրներին: Հայտարարության այս հատվածը հատկապես ուշագրավ է ՌԴ-ԱՄՆ հարաբերությունների կտրուկ լարվածության և անվտանգային երաշխիքների վերաբերյալ բանակցությունների համատեքստում: Ըստ էության՝ Չինաստանը իր լիարժեք աջակցությունն է հայտնում Ռուսաստանին և կիսում է միջազգային անվտանգության վերաբերյալ վերջինիս հիմնական մտահոգությունները: Մասնավորապես, համատեղ հայտարարության տեքստում բառացիորեն կրկնվում է ՌԴ կողմից պարբերաբար շրջանառվող այն թեզը, որ «ոչ մի երկիր չի կարող և չպետք է ապահովի սեփական անվտանգությունը՝ այլոց անվտանգության հաշվին և համաշխարհային անվտանգությունից զատ»: Այսինքն՝ Չինաստանը պաշտպանում է անվտանգության անբաժանելիության սկզբունքի վերաբերյալ ռուսական կողմի մեկնաբանությունները և այս հարցում երկու երկրները հանդես են գալիս միասնական ճակատով: «Չինական կողմը ըմբռնումով է մոտենում և պաշտպանում է Ռուսաստանի Դաշնության կողմից առաջ քաշած առաջարկները՝ Եվրոպայում անվտանգության երկարաժամկետ և իրավաբանորեն պարտադիր երաշխիքների ձևավորման վերաբերյալ» նշված է համատեղ հայտարարության մեջ:

Համատեղ հայտարարության մեջ նաև անդրադարձ է կատարվում ՆԱՏՕ-ի ընդլայնմանը և ներկայացվում այդ կապակցությամբ Չինաստանի ու Ռուսաստանի միասնական բացասական դիրքորոշումը. «Կողմերը գտնում են, որ առանձին պետություններ, ռազմա-քաղաքական դաշինքներ կամ միություններ այլոց անվտանգության հաշվին ուղղակի կամ անուղղակի միակողմանի ռազմական առավելություն ստանալու նպատակ են հետապնդում՝ այդ թվում անբարեխիղճ մրցակցության մեթոդով, ուժեղացնում են աշխարհաքաղաքական մրցակցությունը, ուռճացնում են հակադրությունն ու թշնամանքը, էականորեն խաթարում են միջազգային անվտանգության և գլոբալ ռազմավարական կայուն կարգը: **Կողմերը դեմ են հանդես գալիս ՆԱՏՕ-ի հետագա ընդլայնմանը**, Հյուսիսատլանտյան Դաշինքին կոչ են անում հրաժարվել «Սառը պատերազմին» հատուկ գաղափարականացված մոտեցումներից, հարգել մյուս երկրների ինքնիշխանությունը, անվտանգությունն ու շահերը, նրանց քաղաքակրթական ու պատմամշակութային բազմազանությունը…»: Ինչպես տեսնում ենք, հայտարարության այս հատվածը լիարժեք համապատասխանում է անվտանգային

երաշխիքների վերաբերյալ ռուսական կողմից Արևմուտքին ներկայացրած պահանջների տրամաբանությանը:

Չնայած միջազգային փորձագիտական շրջանակներում մինչ այժմ կար տեսակետ, որ Չինաստանը մեծ հաշվով դեմ չէ Եվրոպայում ՆԱՏՕ-ի ընդլայնմանը, քանի որ այդպիսով վերջինիս ուշադրությունը շեղվում է ՉԺՀ անմիջական հարևանությամբ գտնվող տարածաշրջանից, սակայն այս հայտարարության տրամաբանությունը բոլորովին այլ բանի մասին է հուշում: Չինաստանի դիրքորոշման կոշտացումը հավանաբար նույնպես կապված է վերջերս Ղազախստանում տեղի ունեցած իրադարձությունների հետ, քանի որ «գունավոր հեղափոխությունների» հետագա տարածումը Կենտրոնական Ասիայում կարող է հանգեցնել ՆԱՏՕ-ի ընդլայնմանը արդեն Չինաստանի անմիջական հարևանությամբ:

Ռուսաստանն իր հերթին արձագանքել է Չինաստանի մտահոգություններին՝ կապված Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ԱՄՆ ռազմա-քաղաքական ակտիվության մեծացման հետ: Հայտարարության մեջ մասնավորապես նշվում է. «Կողմերը դեմ են Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում փակ դաշինքների կառուցակարգերի և հակամարտող ճամբարների ստեղծմանը, պահպանում են զգոնությունը ԱՄՆ հնդկական-խաղաղօվկիանոսյան ռազմավարության՝ տարածաշրջանում խաղաղության և կայունության վրա բացասական ազդեցության վերաբերյալ»: Պուտինն ու Սի Ծինփինը իրենց մտահոգությունն են հայտնում նաև ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ավստրալիայի նախաձեռնությամբ ստեղծված «անվտանգության ոլորտում եռակողմ համագործակցության (AUKUS)», մասնավորապես՝ միջուկային սուզանավերի ոլորտում համագործակցության վերաբերյալ վերջիններիս կայացրած որոշման կապակցությամբ: Չինաստանն ու ՌԴ-ն գտնում են, որ այն կարող է տարածաշրջանում սպառազինությունների մրցավազք հրահրել և նոր ռիսկեր ստեղծել միջուկային զենքի տարածման համար: Բացի այդ կողմերը միասնական դիրքորոշմամբ դատապարտում են նաև սպառազինությունների կրճատման և վերահսկման միջազգային պայմանագրերից դուրս գալու ԱՄՆ քաղաքականությունը, վերջինիս կողմից տիեզերքի ռազմականացման փորձերը:

Հայտարարության մեկ այլ ուշագրավ դրվագ է Չինաստանի և Ռուսաստանի մտահոգությունը միջազգային կենսաբանական անվտանգության կապակցությամբ: Կողմերը հանդես են գալիս կենսաբանական և տոքսիկ զենքերի արգելման կոնվենցիայի մեխանիզմների ամրապնդման, դրա ինստիտուցիոնալիզացիայի

օգտին՝ առաջարկելով դրա վերաբերյալ ընդունել իրավաբանորեն պարտավորեցնող հուշագիր: Կողմերը նաև իրենց մտահոգությունն են հայտնում երրորդ երկրներում ռազմակենսաբանական ոլորտում ԱՄՆ և դաշնակիցների գործունեության կապակցությամբ: ՌԴ-ն բազմիցս այս հարցում իր մտահոգություններն է ներկայացրել՝ առաջին հերթին կապված ԱՊՀ երկրներում ԱՄՆ կենսաբանական լաբորատորիաների գործունեության հետ: Այժմ, փաստորեն, Չինաստանն ու Ռուսաստանը այս հարցում համատեղ դիրքորոշում են ներկայացնում: Ուշագրավ է, որ դեռևս կորոնավիրուսի համավարակի տարածման առաջին ամիսներին «Լույս» հիմնադրամի փորձագետները ՀՀ կառավարությանը առաջարկներ էին ներկայացրել՝ «Կենսաբանական պաշտպանության միջազգային կազմակերպություն ստեղծելու» նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ[4], որը անտեսվել էր ՀՀ իշխանությունների կողմից: Այժմ արդեն այս ոլորտում ավելի ամուր վերահսկողական մեխանիզմների ստեղծման առաջարկով են հանդես գալիս երկու գերտերություններ:

3. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ՝ ՌԴ ԵՎ ՉԺՀ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ

Պուտինի և Սի Ծինփինի համատեղ հայտարարության մյուս կարևոր շեշտադրումները վերաբերում են փոփոխվող աշխարհակարգի վերաբերյալ երկու երկրների պատկերացումներին և մոտեցումներին: Հայտարարության մեջ նշվում է, որ Չինաստանն ու Ռուսաստանը՝ որպես երկու համաշխարհային գերտերություններ և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ, մտադիր են միասին կառուցել ավելի բարգավաճ, կայուն և արդար աշխարհ, միասին ստեղծել նոր տիպի միջազգային հարաբերություններ: Ընդ որում, կողմերը միասնական տեսակետ ունեն նաև այդ հարաբերությունների գաղափարական հենքի վերաբերյալ: Մասնավորեպես, ռուսական կողմը դրական է գնահատում «ընդհանուր ճակատագրով մարդկության համայնքի» վերաբերյալ չինական հայեցակարգը, Պեկինն էլ ողջունում է «միջազգային հարաբերությունների արդար բազմաբևեռ համակարգի ձևավորման» հարցում ռուսական կողմի ջանքերը:

Ինչպես արդեն նշվեց, Չինաստանն ու Ռուսաստանը հանդես են գալիս գործող միջազգային կառուցակարգերի՝ մասնավորապես ՄԱԿ-ի և նրա Անվտանգության խորհրդի կենտրոնական դերակատարության պահպանման օգտին: Բացի այդ, հայտարարության մեջ Պեկինն ու Մոսկվան ընդգծում են միջազգային

[4] «Լույս» Հիմնադրամի առաջարկությունը կառավարությանը՝ «Կենսաբանական պաշտպանության միջազգային կազմակերպություն ստեղծելու» նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ, 26.03.2020թ, https://168.am/2020/03/26/1280186.html (այցելվել է 10.02.2022թ.):

համագործակցության «Մեծ քսանյակի» հարթակի կարևորությունը՝ շեշտելով այլ միակողմանի և գաղափարականացված հարթակների բացասական դերակատարության մասին: Խոսքը, իհարկե, առաջին հերթին «Մեծ յոթնյակի», «Ժողովրդավարությունների գագաթնաժողովի», «AUKUS» և արևմուտքի կողմից խրախուսվող այլ հարթակների մասին է: Փոխարենը կողմերը հանդես են գալիս Շանհայի համագործակցության կազմակերպության, ԲՐԻԿՍ-ի ակտիվացման, դրանց մեխանիզմների հետագա կատարելագործման, Եվրասիական տնտեսական համագործակցության և «Գոտի և ճանապարհ» ծրագրերի ավելի ներդաշնակեցման օգտին:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օլիմպիական խաղերի նախաշեմին ՌԴ և Չինաստանի նախագահների տարածած հայտարարությունը զուտ արարողակարգային տեքստ չէ, այն համապարփակ ձևով ներկայացնում է միջազգային հարաբերությունների ակտուալ հարցերի վերաբերյալ երկու երկրների միասնական դիրքորոշումը և իր բնույթով հանդիսանում է աննախադեպ և յուրահատուկ փաստաթուղթ: Այս տեսանկյունից ուշագրավ է փաստաթղթում առկա հետևյալ միտքը. կողմերը հաստատում են, որ «**ռուս-չինական նոր տիպի միջպետական հարաբերությունները գերազանցում են «Սառը պատերազմի» ժամանակների ռազմաքաղաքական դաշինքները**»: Երկու երկրների բարեկամությունը սահմաններ չունի, համագործակցությունը չունի «արգելված ոլորտներ», երկկողմ ռազմավարական համագործակցության ամրապնդումն ուղղված չէ երրորդ երկրների դեմ և ենթակա չէ փոփոխվող միջազգային միջավայրի ու երրորդ երկրներում իրավիճակային փոփոխությունների ազդեցությանը»:

Այս ձևակերպումը, ըստ էության, ենթադրում է, որ Պեկինն ու Մոսկվան երկկողմ հարաբերությունները գնահատում են որպես ավելի ամուր դաշինքի օրինակ, քան, ենթադրենք, ՆԱՏՕ-ն, որը նույնպես «Սառը պատերազմի» ժամանակների ռազմաքաղաքական դաշինքներից մեկն է: Այսինքն՝ թեև երկու երկրները ֆորմալ առումով չեն կազմել ռազմաքաղաքական դաշինք, սակայն միջազգային և համաշխարհային ռազմական և քաղաքական տարբեր հարցերի շուրջ դիրքորոշումներն այնքան մոտ են, որ նույնիսկ գերազանցում են գործող կառուցակարգային դաշինքներին: Այս առումով ուշագրավ է, որ հայտարարության տարածմանը զուգահեռ ընթանում էին ՌԴ-Չինաստան-Իրան հերթական ռազմա-

ծովային զորավարժությունները՝ Հնդկական օվկիանոսում[5], ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ ռազմաքաղաքական համագործակցության մասին հայտարարություններն ունեն նաև գործնական նշանակություն:

Ռուս-չինական այս համատեղ հայտը՝ միջազգային հարաբերությունների ոլորտում, կարող է մեծապես փոխել միջազգային հարաբերությունների տրամաբանությունը: Ձևավորվում է երկու գերտերություններից բաղկացած նոր ռազմաքաղաքական բևեռ, որոնցից յուրաքանչյուրը, թեև պահպանում է իր ինքնուրույնությունն ու առանձնահատկությունները, սակայն կարևոր միջազգային հարցերի շուրջ հանդես է գալիս միասնական դիրքորոշմամբ[6]: Սա նշանակում է, որ առաջիկայում ավելի է սրվելու մի կողմից՝ ռուս-չինական, մյուս կողմից՝ ԱՄՆ և ՆԱՏՕ հակադրումը տարբեր միջազգային հարցերի շուրջ, ինչը իր հերթին բարդ աշխարհաքաղաքական ընտրության առջև է կանգնեցնելու փոքր պետություններին:

«Լույս» հիմնադրամը նախորդ տարիներին տարբեր վերլուծությունների շրջանակներում անդրադարձել է փոփոխվող աշխարհակարգի առանձնահատկություններին և փոքր պետությունների, այդ թվում՝ Հայաստանի համար դրանից բխող նոր սպառնալիքներին և հնարավորություններին[7]: Ցավոք, այս կապակցությամբ մեր մտահոգություններն ու առաջարկները անտեսվել են Հայաստանում որոշումներ կայացնող ինստիտուտների կողմից: Այլապես ինչպե՞ս բացատրել մի կողմից՝ Հայաստանի մասնակցությունը «Ժողովրդավարության առաջին գագաթնաժողովին», մյուս կողմից՝ Պեկինի օլիմպիական խաղերի փաստացի դիվանագիտական բոյկոտը:

Հաշվի առնելով հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշինքի առանձնահատկությունները, Հայաստանի անվտանգային սպառնալիքները՝ մեր երկիրն իրավունք չունի սխալ աշխարհաքաղաքական ընտրություն կատարել, ինչի

---

[5] Iran, Russia, China Hold Joint Naval Drill Amid Growing Ties, January 21, 2022, https://www.rferl.org/a/iran-russia-china-exercises/31663080.html (այցելվել է 10.02.2022թ.):

[6] "China-Russia Cooperation; Determining Factors, Future Trajectories, Implications for the United States", RAND Corporation, by Andrew Radin, Andrew Scobell, Elina Treyger, J.D. Williams, Logan Ma, Howard J. Shatz, Sean M. Zeigler, Eugeniu Han, Clint Reach, 2021, https://www.rand.org/pubs/research_reports/RR3067.html (այցելվել է 10.02.2022թ.):

[7] Կորոնավիրուսը, աշխարհաքաղաքական վերադասավորումները և Հայաստանը, «Լույս» հիմնադրամ, 6.12.2020թ, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=192 , (այցելվել է 10.02.2022թ.), Չինաստանի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում՝ Իրանի և Թուրքիայի հետ հարաբերությունների օրինակով, «Լույս» հիմնադրամ, 17.09.2021թ, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=246 (այցելվել է 10.02.2022թ.):

արդյունքում Հայաստանը կարող է վերածվել մանրադրամի՝ գերտերությունների ձեռքերում: Մենք չենք կարող մի կողմից՝ մեր երկրի անվտանգությունը 100 տոկոսով վստահել Ռուսաստանին, մյուս կողմից՝ մասնակցել ակնհայտորեն Ռուսաստանի և նրա հետ միջազգային հարցերում միասնական դիրքորոշմամբ հանդես եկող Չինաստանի դեմ ուղղված միջազգային գագաթնաժողովին, մի կողմից՝ անդադար խոսենք հավասարակշռված արտաքին քաղաքականության մասին, մյուս կողմից՝ փաստացի միանալ գերտերություններից մեկի դեմ մյուսի կազմակերպած դիվանագիտական բոյկոտին:

Եվրոպայում անվտանգության երաշխիքների շուրջ ռուս-ամերիկյան բանակցությունները միտված են տարածաշրջանում նոր միջազգային կարգի հաստատմանը, որտեղ ակտիվորեն և ընդգծված ռուսամետ դիրքորոշմամբ իր դերակատարությունն է ունենալու նաև Չինաստանը: Հայաստանը, Ուկրաինան, Վրաստանը և մյուս փոքր երկրները այդ վերադասավորումների վրա ազդեցության որևէ լծակ չունեն, սակայն արտաքին քաղաքական սխալ հաշվարկների ու անհեռատես որոշումների արդյունքում կարող են դառնալ այս գործընթացի հիմնական զոհերը: Հայաստանը չի կարող իրեն թույլ տալ ներքաշվել «Պեկինի ձմեռային աշխարհաքաղաքական խաղերի» մեջ, սակայն նաև չի կարող գերտերությունների քաղաքական խաղերում իրեն «խաղալիքի» դեր վերապահել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*